որ նոքա, ովքեր ցանկանում են մասնակցել Ցօբելեարի անունը յաւերժացնելու նպատակով կազմուելիք դրամագլխի կազմելուն՝ կարող են նուէրներն ուղարկել Ե. Բ. Բաբայեանցին (Պ. Բուրգ, Մօնէտնի դվօր)։ Հաւաքուելիք դրամագլխի վերջնական կարգադրութիւնը թողնուած է Ցօբելեարի բարեհայեցողութեան»։

«Լուման» կաշխատէ միւս անգամ մանրամասն տեղեկութիւններ տալ այդ մասին. իսկ առ այժմ իւր սրտագին շնորհաւորութիւններն է ուղղում յարգելի յօբելեարի բազմամեայ պետական և գրական բեղմնաւոր գործունէութեան առիթով։

Կ. ՊՕԼՍԻՑ

Կ. Պօլսից մեր թղթակիցը հաղորդում է մեզ, որ ռուսահայ հոգևորական Բազուի արժ. Ներսէս քահ. Տէր Կարապետեանցը Իզմիրեան մրցանակաբաշխութեան ներկայացրած քարոզով իւր տարած դրամական նուէրը՝ յանուն Ամենապատիւ ս. պատրիարքի մի գրութեամբ թողել է ի նպաստ Կ. Պօլսի ս. Փրկեան Ազգ. Հիւանդանոցի մանկական բաժնին—ի յիշատակ իւր վաղամեռիկ որդի Յակովբիկի։

ԳԼԴԱՆԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս օրերս մենք առիթ ունեցանք տեսնել Թիֆլիսից 10 վերստ հեռու գտնուած Գլդան գիւղի նորաշէն հայ եկեղեցին, որ կառուցել է Նորին Մեծութեան սենեկապետ Կ. Ն. Հաքիմեանը։

Հաքիմեանները կալուածատէր են յիշեալ գիւղի ու շրջակայքի և պ. Հաքիմեանի հայրը, որ այժմ ընտանիքով տեղափոխուած է Գլդան, կառուցել է հնում՝ տեղական վրացիների համար եկեղեցի, իսկ որդին չուկենալով հոգևորապէս անմխիթար թողնել գիւղի մի բուռն հայ ժողովուրդը, շինել է նոցա համար հայ եկեղեցի։ Եկեղեցիներ ի հարկէ շատ կան գիւղերում և շատ էլ կառուցւում են այս և այն բարերարների ձեռքով, բայց եթէ մենք շեշտում ենք Գլդանի հայ եկեղեցին, դա ունի իւր յատուկ պատճառը. դա թէպէտ և մի շատ

փոքրիկ, հայի գիւղական ժողովրդին բաւական տարածութիւն ունեցող մի եկեղեցի է, բայց աչքի է ընկնում իւր կոկիկ, գեղեցիկ, նրբանկար և ներդաշնակ կերտուածով. բեմը, սեղանը, խորանները, աւազանը, լուսամուտները, դռները և այլն և այլն մի մի մանրանկար են իսկական դաղափարական եկեղեցու մասերի. պատկերները, բոլորն էլ Ռուսաստանի մայրաքաղաքներում լաւագոյն գեղարուեստների արտադրութիւն, հրաշալի և հայկական, մանաւանդ բեմի վրայի Աստուածամոր և Փրկչական պատկերը, որպիսին չի կարելի տեսնել Թիֆլիսի բազմաթիւ հայ եկեղեցիներում. նոյնը կարելի է ասել և զգեստների, անօթների ու զարդերի մասին. միով բանիւ եկեղեցու բարերարը աշխատել է այդ վիրախօս գիւղում մի գեղեցկադիր բարձրավանդակի վերայ կառուցանել մի փոքրիկ եկեղեցի—թանգարան, որից հիանում են ոչ միայն տեղական բնակիչները, այլ և քաղաքների բոլոր այցելուներ։ Ինչպէս տեղեկացանք պարոնը դիտաւորութիւն ունի եկեղեցուն կից բակում կառուցանել և մի ընակարան քահանայի համար։ Պատիւ և փառք նորան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մեծարգոյ Տ. Խմբագիր

Սեպուհ պարտականութիւն եմ համարում ինձ Ձեր պատուական հանդիսի միջոցով արտադին շնորհակալութիւնս յայտնել և օրհնել այն բոլոր հաստատութիւններին և անձերին, որոնք անձամբ, հեռագրիրներով և նամակներով շնորհաւորեցին իմ նշանակումը յառաջնորդութիւն թեմին Հայոց Վրաստանն և Իմերէթի։

1904 թ. 18 Հոկտեմբերի Դարեգին եպիսկոպոս։
Տփխիս

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԻ ՀԱՅ ԳՐՉԱԳԻՐՆԵՐ։

Ս. Էջմիածնից մեզ հաղորդում են, որ Սանահնի վանքում գտնուած քսանևեօթն հատ բաւական կարևոր ձեռագիրներ նոյն վանքի նախկին վանահայր և այժմ թեմիս նորընտիր Ա. ռաջնորդ սրբազան Գարեգին եպիսկոպոսի կարդադրութեամբ ուղարկուել են Վեհափառ կաթուղիկոսին ս. Էջմիածնի մատենադարանում պահելու համար։ Գրչագիրներից հնագոյնը գրուած է հայոց Զ և փրկչական 1461 թուին, իսկ նոցա մէջ եղած Ընդհանրականի մի յիշատակարանից երևում է, որ այդ